

891-99v  
p-95

Քրիստոսի շնորհքով

3053


Հովհաննէս Երանանդի

Քրիստոս

1910



5351-*mh*



Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ.

# ՏԵՂԵՐ ԾԱՌԱՆ

1001  
9891/2

2007  
ԼԿԱՐԵՑ Գ.ԵՐԻՅԵԱՆ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԼԵՒԻՆ 1910. թիվ 84

# ՏԷՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Աստուած բարի տայ ձեզ էլ, երկու  
ախպօրն էլ: Լինում են շեն լինում եր-  
կու աղքատ ախպէր են լինում: Մտա-  
նում են ինչ անեն, ոնց անեն, որ ի-  
րենց տունը պահեն: Վճուռում են՝ փոր-  
ըր տանը մնայ, մեծը գնայ մի ունեորի  
ժառայ մանի, ոտճիկ ստանայ, զրկի  
տուն:

Էսպէս էլ մեծը վեր է կենում գնում  
ճի հայրուտի մօտ ծառայ մանում:

Ժամանակ նշանակում են մինչև  
մինչև զատան կրկէի ձէն ածելը: Էս  
հարուստը մի չըլլած պայման է  
գնայ ծառային. Ասում է՝ «մինչև էն  
ժամանակ թե գու բարկանաս—գու  
հազար մանկի տուգանք տա ինձ, թէ  
ես բարկանամ—ես պամ»

Ես որ հազար մանէթ չունեմ որ  
տեղից տամ, ասում է ծառան:

—Բան չը կայ փոխարէնը ինձ ապ-  
ար տարի ձրի կը ծառայես:

Տղէն մին վախենում է էս տար-  
րինակ պայմանից, մին էլ մտածում է,  
թէ ինչ պէտք է պատահի: Ինչ ուզո-  
ւեն անեն, ես եմ ու շեմ բարկանա-  
լըծանք գնաց: Իսկ թէ իրենք կը բա-  
կանան, թող իրենք էլ տուժեն իրեն-  
դրած պայմանով:

Ասում է լաւ. համաձայնում է  
Պայմանը կապում են ու մտնում է ծա-  
ռայութեան:

Միւս օրը վաղ տէրը վեր է կաց-  
նում ծառային զրկում է արտը հնձի-  
լու:

—Քնա, ասում է, քանի լուս է  
հնձի, որ մութն ընկնի, կը գաս:

Ծառան գնում է ամբողջ օրը հըն-  
ջում, իրիկունը յոգնած գալիս է տուն:  
Տէրը հարցնում է.

—Էդ ուր եկաք:

—Իէ արևը մէր մտաւ, ես էլ ե-  
կայ:

—Չէ, էգպէս չի: Ես քեզ տսել եմ՝  
քանի լուս է պէտք է հնձես: Արևը մէր  
Տեսաւ, բայց տես, նրա ախպէր լուս-  
Նեակը գուրս եկաւ: Մա ինչ պակաս է  
լուս տալի...

—Էդ մեց կը վնի... գարմանում  
Տտան:

—Չը, գու արդէն բարկանում ես,  
հարցնում է տէրը:

—Չէ, չեմ բարկանում... ես միտն  
ասում էի հոգեւած եմ... Մի քիչ հան-


գտանամ... կըզկըզում է վախեցած  
ծառան ու գնում է նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչև լուս-  
նեակը մէր է մտնում: Բայց լուսնեա-  
կը մէր է մտնում թէ չէ, դարձեալ  
արեգակն է գուրս գալի: Ծառան ու-  
ժասպառ արտում վեր է ընկնում:

—Վայ, քու արան էլ հարամ ըլի,  
քու հացն էլ, քու տւած ոտճիկն էլ...  
սկսում է հայհոյել յուսահատուած:

—Չը, գու բարկանում ես, կանդ-  
նում է գլխին հարուստը: Երբոր բար-  
կանում ես, մեր պայմանը պայման է:  
Էլ չասես թէ քեզ հետ ասանց իրո-  
ւունքի վարեցին:

Ու պայմանի ուժով սախում է,  
ծառան կամ հազար մանէթ տուգան-  
տայ, կամ տար տարի ձրի ծա-  
ռայի:



Ծառան մնում է կրակի մէջ: Հա-  
գար մանէթ շունէր, թէ տար հոգին  
ազատ անէր, տասը տարի էլ էս տե-  
ակ մարդու ծառայելը անկարելի բան  
էր: Միտք է անում միտք, վերջը հա-  
գար մանէթի պարտամուրհակ է տալի  
հարուստին, դառն ու դատարկ վերա-  
դառնում տուն:

— Շը, ի՞նչ արիր, հարցնում է  
փոքր ախպէրը: Ու մեծ ախպէրը նրա-  
տում է, գլուխն եկածը պատմում, ինչ-  
ոյէս որ պատահել էր:

— Բան չը կայ, ասում է փոքրը,  
դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ  
էս գնամ:

Վեր է կեցում հիմի էլ փոքր ախ-  
պէրն է գնում ծառայ մտնում էլ նոյն  
հարուստ մուտ:

Հարուստը դարձեալ ժամանակը

որոշում է մինչև դարնան կիւրի ձէն  
ածելը, ու պայման է դնում, որ եթէ  
ծառան բարկանայ հագար մանէթ տու-  
գանք տայ կամ տասը տարի ճրի ծա-  
ռայի, թէ ինքը բարկանայ, հագար մա-  
նէթ տայ ու էն օրից էլ ծառան ազատ է:

— Չէ, էդ քիչ է, հակառակում է  
տղէն: Թէ դու բարկանաս դու ինձ եր-  
կու հագար մանէթ տաս, թէ ես բար-  
կանամ ես քեզ երկու հագար մանէթ  
տամ կամ քսան տարի ճրի ծառայեմ

— Լաւ, — ուրախանում է հարուս-  
տը: Պայմանը կապում են, ու այժմ  
էլ փոքր ախպէրն է մտնում ծառայու  
թեան:

Առաւօտը լուսանում է, էս ճա-  
նան վեր չի կենում տնօրիցը: Տերը  
դուրս է գնում, սուն է գալի, էս ծա-  
ռան դեռ քնած է:



—Այ տղայ, դէ վեր կաց է, օրը աշ դառաւ:

—Հը, բարկանում ես դու... գլուխը եր է քաշում ծառան:

—Ձէ, չեմ բարկանում, վախեցած ատասխանում է տէրը. միայն ասում է՝ պէտք է արտը գնանք հնձելու:

—Հա, որ էդ ես ասում ոչինչ, կը անք, ինչ ես փոստում:

Վերջապէս ծառան վեր է կենում, ում է տրեխները հագնել: Տէրը ըս է գնում, ներս է գալի, սա զեռ հնները հագնում է:

Այ տղայ, դէ չուտ արա, հագի է... Եր, եօ չես բարկանում:

Եվ է բարկանում, ես միայն ասում եմ՝ ուշանում եմ...

Երբիչ բան է. թէ չէ պայ...

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արան են գնում, ճաշ է դառնում:

— Էլ ինչ հնձելու ժամանակ է, ասում է ծառան,— տեսնում ես ամենքն էլ ճաշում են, մենք էլ մեր ճաշն ուտենք՝ յետոյ:

Նստում են, ճաշն ուտում: Ընթաց յետոյ էլ ասում է «մշակ մարդիկ ենք, պէտք է մի քիչ քնենք հանգստանանք թէ չէ»: Գլուխը կոխում է խոտերի մէջն ու քնում մինչև իրիկուն:

—Տօ, վեր կաց է, մի՞նեց է, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վայ քու դէսը դրկողի վիզը կտորի, վայ քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էօ ինչ կրակի մէջ լնէլայ... գորգոտայ յուսանալուամ...

—Հը, շոքի թէ ու... գլուխ վեր է քաշում



—Չէ, ով է բարկանում, ես էն էի  
ասում թէ՛ մի՞նե է, տուն գնալու ժա-  
մանակն է:

—Հն, էդ ուրիշ բան է, գնանք, թէ  
չէ հօ մեր պայմանը գիտես. վա՛յ նրա  
մեղքը, ով բարկացաւ:

Գալիս են տուն: Տեսնում են հիւր  
է եկել:

Ծառային զրկում է թէ՛ գնա ոչ-  
խար մորթի:

—Ո՞րը:

—Որը կը պատահի:

Ծառան գնում է: Մի քիչ յետոյ  
լուր են բերում հարուստին, թէ՛ հասի,  
որ քու ծառան ամբողջ հօտդ կտորեց:  
Էս հարուստը վազում է, տեսնում է  
ճիշդ որ, ինչ ոչխար ունի, բոլորը ծա-  
ռան մորթել է: Գլխին տալիս է, գոռում.  
— Էս ինչ էս արել, ա՛յ անասունս՝


քու տունը քանդւի, ինչ խմ տու  
քանդեցիր...

—Իս ասիր՝ «որ ոչխարը պատահի  
մորթի, ես էլ եկայ, բոլորը պատա-  
հեցին բոլորը մորթուեցի—ուրիշ աւել  
պակաս ի՞նչ եմ արել,—հանգիստ պա-  
տասխանում է ծառան,—բայց կարծեմ  
դու բարկանում ես...

—Չէ, բարկանում չեմ, միայն  
ափսոս գալիս է, որ էսքան ապրանքս  
փչացաւ...

—Հնու, որ բարկանում չես, էլ կը  
ծառայեմ:

Հարուստը մտածում է՝ ինչ անի,  
ոնց անի, որ էս ծառայիչն ազատի  
Պայման է կապել մինչև մին էլ գար  
նան կրկի՛ ձէն ամէլը, այն ինչ դեր  
նոր են մտել ձմեռը, դեր որպէ՛ղ են  
գարունն ու կրկու՛ճ...



Միտք է անում միտք, մի հնար է  
 մտածում: Կտոջը տանում է անտա-  
 ուում մի ծառի վեր հանում ու պա-  
 տիրում որ «կուկու» կանչի: Ինքը  
 գալիս է ծառային տանում թէ՛ արի  
 գնանք անտառը որսի: Հէնց անտառն  
 էն մտնում թէ չէ, կինը ծառի վրայից  
 կանչում է—«կուկու, կուկու»...

—Էհր, աչքդ լուս,—ասում է ծա-  
 ռային տէրը. կրկուն կանչեց, ժամա-  
 նակդ լրացաւ...

Տղեն գլխի է ընկնում տիրոջ խո-  
 րամանկութիւնը:

—Չէ, ասում է, ով է լսել որ տա-  
 րու էս եղանակին, ձմեռայ կիսին,  
 կիւնն ձէն ամի, որ սա ձէն է ամում:  
 Ես պետք է էս կրկին սպանեմ, սա  
 ինչ կրկու է...

Ասում է ու հրացանը քաշում չէ-  
 պի ծառը:

Տէրը գոռարով ընկնում է սուռը.  
 —Վայ չը գարկես, Աստու պիրուն...  
 սև լինի քու պատահելու օրը, էս ինչ  
 փորձանք էր, որ էս ընկայ մէջը...

—Հը, չըլինի՞ թէ բարկանում ես...

—Հա, ախպէր, հերիքէր. արի՛ ինչ  
 տուգանք տալու եմ քամ, քեզանից  
 ազատեմ: Իմ դրած պայմանն է—էս  
 էլ պէտք է տուժեմ: Հիմի նոր եմ հաս-  
 կանում էս հին խօսքը՝ թէ «մարդ ինչ  
 անի. իրեն կանի»:

Էսպէս հարուստը խեղճանում է  
 իսկ փոքր ախպէրը Տե՛ծ ախպօր պէս  
 պարտքի թուղթը պատում է կայար  
 մանէթ տուգանքն էլ արնում ու վե-  
 րադրամում տուն:

3053



0007392

20 13

ՀՀ Ազգային գրադարան

NL0007392



